№ 208 Նոյեմբերի 7 (19) 1881 Նոյեմբերի 7 (19) № 208

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստորագրագրացիր գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գօրիսից. Նամակ Քութայիսից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Порядокъ» լրագրի թղթակցութիւնը. Անգլիա. Ֆրանսիա. Գերմանիա. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

—

Հոկտեմբերի 21

Արդէն յայտնի է «Մշակի» № 183-ի մէջ տրպտված նամակիցս, որ Սիւնեաց գաւառը գտնվում է վերջին տգիտութեան մէջ, և չունի ոչ մի ծխական դպրոց. դորա համար ասելորդ եմ համարում խօսել, բայց պարտք եմ համարում ինձ այս անգամ դարձնել հոգեոր իշխանութեան և յարգելի ընթերցողի ուշադրութիւնը մի այլ կէտի վրա. Սիւնեաց գաւառը, ինչպէս յայտնի է յիշեալ նամակից, բաղկանում է իննսուն հայաբնակ գիւղերից և 5000 տուն հայ ժողովրդից. և դորա բնակիչները ստանում են ամեն տարի ծննդական վկայականներ, առ սակաւը տարեկան երկու հարիւր, ի հարկէ, Երևանի հայոց վիճակային կօնսիստորիայից, որոնց ամեն մէկի համար վճարում են յօգուտ Երևանի թեմական դպրոցի հնգական բուբլի, որ ընդամենը կը լինի տարեկան մի հազար բուբլի. Երևանի դպրանոցում սովորում են Երևանցի ուսումնասէր ազատների որդիքը, իսկ խեղճ սիւնեցու. անբաղդ որդին մնում է դարձեալ մի և նոյն տգիտութեան մէջ. Զը գիտեմ սիւնեցին ինչով է յանցաւոր, որ իր դառը քրտինքով աշխատած կօպէկները պէտք է նուիրի Երևանցուն, որ նրանով ուսում տալ տայ իր որդուց. երևի նրանով որ կօնսիստորիան գտնվում է Երևանում, և ոչ Տաթեւում. Մթթէ չէ կարելի ծննդական վկայականը ստանալ Երևանի կօնսիստորիայից, իսկ հնգական բուբլիները ներկայացնել Տաթեւի հոգեոր կառավարութեանը. Այդ շատ կարելի է և դրանով Տաթեւի վերջին շնչին հասած վանական դպրոցը, գոնէ փոքր ինչ կարգի կը բերվի և նորանում կը սովորեն 30—40 աշակերտ էլ աւելի. Բայց ափսոս որ դորա համար ոչ ոք չէ մտածում, Սիւնեցին վճարում է, իսկ երևանցին վայելում է.

Զը մոռանանք յիշել որ մի հազար բուբլին Տաթեւի պէս տեղում մեծ նշանակութիւն ունի.

Այս մասին դարձնում եմ Սիւնեաց երկրի առնուանի մարդկանց և ուսումնասէրների ուշադրութիւնը և առաջարկում եմ նրանց խնդրագրութեամբ դիմել Նորին Օծութեանը և խնդրել որ բարեհաճի Տաթեւի վիճակից ստանալի հնգական բուբլիները յատկացնել մի առ ժամանակ Տաթեւի հոգեոր վանական դպրոցին, մինչև կը բացվի այդտեղ և ծխական դպրոց. Ես յոյս ունեմ, որ Նորին Վեհափառութիւնը արդարութիւնը պաշտպանելով, չի թոյլ տայ, որ մէկի ձեռքից խլեն մի հատ կօպէկը և տան տասն ունեցողին, իսկ ուսումնասէր երևանցին էլ քաղաքավարութեամբ կը հրաժարվի տաթեւացի ազգատի կօպէկներով իր որդուն ուսում տալուց.

Ա. Յովհաննէսեանց

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Հոկտեմբերի 29-ին

Անցեալ 25-ին կիրակի առաւօտեան, Քութայիսի հայոց ծխական ուսումնարանում հաւաքվեցան տեղիս հայախօս ուսումնականները և մի քանի վաճառական անձինք իրագործելու «Մշակում» իմ հաղորդած գրականական երեկոները. Պ. պ. մասնակցողները միմեանց լաւ հասկացնելով իրանց հաւաքվելու նպատակը, որ է հայոց լեզուի մէջ լաւ վարժվել, ապա խօսք եղաւ հաւաքման տեղի մասին, և նրանց խնդրանքը ուսումնարանի սենեակներից մինը տրվեցաւ, ուր պիտի ժողովվեն կիրակի և ուրիշ յարմար տօն օրերին.

Զեմ կարող չը խոստովանվել ես իմ կողմից՝ որ եթէ մասնակցող ուսանողները կամ թէ չէ ապագայ նոր այժերը գնան հեռու երկիրները՝ չեմ կարծում, որ սառչի սրանց մէջ այն եռանդուն գործունէութիւնը, որը սրանք ցոյց են տալիս. Ցայտնել եմ լրագրով սրանց նպատակը, բայց էլի կրկնում եմ, որ դա է՝ լաւ վարժվել գրականական լեզուի մէջ, ծանօթանալ հայոց գրականութեան, պատմութեան և աշխարհագրութեան, նոյնպէս և հայոց ներկայ դրութեան հետ, որ ամենակարևորն է. Մինչև այժմ, հայկական որ և է թերթ տարին մի անգամ հազիւ կը տեսնէիք սրանց ձեռքին, բայց այժմս «Մշակը» ձեռքից ձեռք են խլում. Եթէ սրանք իմէրէթի մի անկիւնում զգացին ժամանակիս հարկաւոր պահանջը. ուրեմն մեծ ամօթ է այն հայ ընտանեաց և ինտելիգենտներին, որոնք ամօթ են համարում իրանց մայրենի լեզուով խօսել և համարում են լուսաւորութեան նշան անպատճառ խօսել մի որ և է օտար լեզուով. Շատ ցաւալի է, որ «Մշակի» այս առաջին նշանաբանը դեռ ևս չէ ազդել հայկական կոշտ սրտերին, ինչպէս պէտք էր. Ուրախ եմ մանաւանդ, որ բաւական է և համակրութիւն է տիրում այս նորակազմ ուսանողական շրջանի մէջ. Թիւը մասնակցողաց կը հասնի 20 հոգու. «Մշակի թերթը, որի խմբագիրը չէ խնայում ձրի ուղարկել այս խմբին, ազահութեամբ է կարդացվում. Թախանձանօք սրտի ցանկանում եմ մի և նոյնը միւս համարիւն ուսանողներին, խոստանում եմ սրանց գործունէութեան մասին երբեմն երբեմն հաղորդել.

Ամսի 20-ին, մի խումբ հայ արանց և կանանց, Ալէքսանդրօպոլից, Ախալցխայից և Ախալքալաքից հաւաքված՝ գնում էր աղօթելու Երուսաղէմ. Նրանց մէջ կային և դարձեալ ուսեալ հոգեոր հայրերը. Այո, լաւ է լինել ջերմեռանդ քրիստոնեայ, բայց տարաժամ ձմեռվայ սկզբին վերկենալ և ճանապարհորդել Սև ծովի վրայով՝ երկիւղալի է, մանաւանդ այնպիսի չքաւոր ընտանեաց, ինչպիսիք նոքա էին. Զարմանալի բան. դէպի Հրէաստան ճանապարհորդել և առանց փողի, հայերը ուրախութեամբ են անում, այդպիսով, տարաբաղդաբար իրանց տունը քանդելով, իսկ դէպի Հայաստան ոչ ոք չի գնայ.

Ց. Ամիրաղանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 28 հոկտեմբերի

«Մշակի» 147 հ. խմբագրութիւնը տուել է ինձ մի պատասխան, որի մասին ես հարկաւոր եմ համարում մէկ երկու խօսք ասել, իբրև թղթակից նոյն թերթի.

«Մշակի» խմբագրութիւնը մի քանի անգամ հիւանդած է իր թղթակիցներին կարելոյն չափ լոկ տեղեկութիւններ, փաստեր տալ և ասած է թէ շատ թղթակցութիւններ այդ իրաւացի պահանջմանը չը բաւականացնելու պատճառով չեն տրպվում. Իսկ ես, դեռ մինչև այդ հրաւէրը «Մշակում» տպած եմ մի նամակ, որ բաղկացած է լոկ փաստերից. այդ փաստերը վերաբերում են այստեղի գործիչներին, որոնց ականջները արդէն սովորել էին Գ. Խ-ի մեղեդիին. Ահա Գ. Խ-ը գրում է ինձ պատասխան և հրատարակած փաստերս հերքելու տեղ, ինձ հայհոյում է, թէ ինչու այդ փաստերը ես հաղորդել եմ և ինքն էլ զրպարտութիւններ անում. Ինչպէս լսել եմ, այդ նամակը, երբ «Մշակը» տեղ չէ տալիս, գիմում է «Մեղուին» որտեղ և տպվում է նա.

Ես չը պատասխանելով այդ նամակին դրա առիթով գրեցի մի նոր նամակ, որ պէտք է համարվի առաջինի շարունակութիւնը.

Երկու օրից յետոյ «Մշակում» կարդացի Գ. Խ-ի նոր պատասխանը, որ լիովին կրկնութիւն է առաջինի. Զը սպասելով այդպիսի մի բան «Մշակի» էջերում և հակառութիւն տեսնելով նրանում, որ պ. խմբագիրը տեղ է տուել այնպիսի մի նամակի, որ հարցը չէ պարզում, փաստեր չէ պարունակում, ես բողոքեցի այդ հակառութեան դէմ. Իսկ պ. խմբագիրը ընդհանրացրել է այս մասնաւոր դէպքը. որ յետոյ հիմն ունենայ ասելու, թէ ես չեմ հասկացել «Մշակի» ուղղութիւնը.

Այս բացատրութիւնից երևում է նաև, որ ես երբէք չեմ հերքում և չեմ հերքել Գ. Խ-ի կամ ում և է իրաւունքը ինձ պատասխանելու փաստերով և լրջօրէն.

Իսկ այժմ պ. խմբագիր, որովհետև դուք իմ մասնաւոր նամակին հրապարակօրէն էք պատասխանել. վասնորոյ ճշմարտութիւնը հրապարակօրէն վերականգնելու համար, խնդրում եմ տեղ տաք այս երկու տողիս.

Ն. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 6 Նոյեմբերի

«Մշակի» 192-ում պ. Խաչ. Քալանթարեանը ապել է մի նամակ, որին մենք անտես արինք մինչև այժմ պատասխանելու. Նամակագիրը առանձին պարծանքով յայտնում է նախ և առաջ՝ որ փաստաբանները շատ աւելի լաւ կարող են հասկանալ ուսումնարանական գործերը՝—քան թէ ուսուցիչները. Զը գիտենք բոլոր փաստաբանները այդպիսի համարմունք ունեն իրանց վրա, թէ այդ մի բացառութիւն է ներկայ օրինակի մէջ. Նամակագիրը յայտնում է որ՝ 1) ինքը ապարդիւն չէ համարել ապագայ ուսուցչական ժողովը և չէ հրաժարվել այդ գործից (շատ ուրախ ենք այդ նոր խոստովանութեան համար). 2) ապագայ ուսուցչական ժողովի պէտքերի համար ոչ թէ 5000, այլ 15—20.000 բուբլ է կարծել, թէպէտ իր նամակում մի կողմից էլ այս է յայտնում. «մօտ հանգամանքներից երևում է, որ այդքան այսինքն 15—20.000 բուբլու պէտք չը կայ ուսուցչական ժողովի համար» և 3) ոչ թէ 5000, այլ 15—20.000 բուբլ է իր ասածը, որով կարելի է 5—10 մանր դպրոց բաց անել գիւղօրայքում. Ցեսնենք թէ՝ ինչպէս կարելի է բաց անել 15—20.000 բուբլիով 5—10 գիւղական դպրոցներ. Ընդամենը 15—20.000 բուբլու դրական, իրական տոկոսը, մինչև անգամ 7 տոկոս հաշուելով, հազիւ տարեկան 1400 բուբլ կարելի լինի ընդունել. այդ գումարից եթէ գիւղական ուսուցչին առանց բնակարանի, փայտի, ծառայի տարեկան ռոճիկ ընդունենք 500 բուբլ (որ շատ երկար կորոնենք). մի 120 բուբլ էլ մի դասարանաւոր դպրոցի բնակարանի վարձ, մի 80 բուբլ էլ փայտի, ծառայի, ջրի և այլ մանր ծախսերի,— ընդամենը կը գոյանայ 700 բուբլ, իսկ 1400 բուբլիով ուրեմն երկու մանր դպրոց կարելի է պահել. էլ որտեղից պ. Քալանթարեանը 5—10 մանր դպրոց է բաց անում, քանի որ այդ գումարով դեռ հազիւ կարելի է մի հատ մի դասարանաւոր կանոնաւոր դպրոց բանալ հէնց թէկուզ գիւղում. Բայց գուցէ ազնիւ պարոնը կարծում է, որ մեր ազգային ուսուցիչների բնակարանը կարող է լինել՝ Դիոգենէսի տակառ, իսկ կերակուրը՝ երկնքից իջնող մանանա. Բայց թող չը նեղանայ մեզանից պ. Քալանթարեանը, եթէ մենք յիշեցնենք նրան, որ նա 5—10.000 բուբլիով ենթադրում էր ժողովի մէջ 5—10 դպրոց. Իւրաքանչիւրի վրա 1000 բուբլ հաշուելով, որի կարելիութեան վրա համաձայնվեցին ոմանք, միայն բացատրելով պարոնին, որ այդ հաշուով կարելի է բաց անել միայն մէկ տարի ժամանակով, ուրեմն ժամանակաւորապէս, որի հետ համաձայն էր և պարոնը. Իսկ այժմ, մենք ապացուցինք որ 15—20.000 բուբլով էլ չէ կարելի մի մանր դպրոց բաց անել. Մենք միշտ պէտք է աչքի առաջ ունենանք այն, ինչ որ իրական է, հնարաւոր է և ոչ թէ խաբվենք մոռացածին հաշիւներով. Մենք հայերս շատ ենք սիրում խրթին թներ լինել միմեանց մօտ, բայց ոչ մէկս չենք մտածում մի օրինաւոր տուն լինել. Հէնց ասենք թէ կարողացանք պ. Քալանթարեանի հաշիւներով 5—10 դպրոց բաց անել և ուսուցչական ժողովը չը կայացաւ,—հարցնում ենք՝ դրանից ինչ օգուտ. ինչ նշանակութիւն ունեն մեզ համար 5—10 դպրոցների բաց անելը. մենք պարծենում ենք ոչ թէ դպրոցների քանակութեամբ, այլ յատկութեամբ միայն. Մենք ամենքս, համարեա միաձայն, ազազակում ենք. «ուսումնարաններ ունենք, բայց ուսում չունենք, կամ ուսում ունենք, արդիւնք չունենք» և դարձեալ նշանակութիւն ենք տալիս աւելի քանակութեանը. Ազգային ուսուցչական ժողովը. եթէ ինչպէս յայտնեցինք, աւելի նախատեսված և աւելի նախապատրաստված կերպարանքով կայանայ, որը կախված է այդ գործի ձեռնարկողներից, հասկանալի է. որ իր նպատակով պէտք է նպաստէ դպրոցների յատկութեանը, կատարելագործելով ուսուցիչներին դպրոցների կանոնաւոր և ճշմարիտ ղեկավարութեան մէջ, ծանօթացնելով նրանց դաստիարակութեան արդիւնաւոր և լաւագոյն եղանակների հետ, հարստացնելով նրանց միտքը մանկավարժական թարմ և առողջ գաղափարներով. հասկանալի է, որ մի այսպիսի գերազանց նպատակի առաջ նոսեմանում են 5—10 նոր և ուրիշների պէս անկատար դպրոցներ բաց անելու. նշանակութիւնը և արժէքը.

Կ. Կ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բաղու, 31 հոկտեմբերի

Այս օրերս «Մշակի» բաժանորդներից մէկը, Յովհաննէս Թառայեանցը, յայտնեց ինձ հետեւեալ միտքը.

Զանազան գաւառական քաղաքներում և գիւղերում գտնվող ազգաս ուսումնարանները, ընթերցարանները և ուրիշ մանր ընկերութիւնները, չունենալով տեսական միջոց մեր պարբերական թերթերը պատանալու, շատ ժամանակ խնդրում են խմբագիրներից ձրիաբար ուղարկել իրանց հրատարակութիւնները. Բայց որովհետև հայ խմբագիրները, որքան էլ որ ցանկանան այդ խնդիրները կատարել, այնու ամենայնիւ նրանց այժից վեր է մի մի օրինակ նուիրել ամենայն այդպիսի ազգաս հիմնարկութիւններին, որոնց թիւը տարուց տարի աւելանում է. քանի որ առանց այն էլ ունեն տարեկան մի քանի հազար բուբլ դէֆիցիտ, այդ պատճառով ցանկալի կը լինէր, որ ամենայն մի կարողութիւն ունեցող բաժանորդ տարեկան մի մի բուբլի մեր պարբերական թերթերին աւել ուղարկելով, պարտաւորացնէր դրանց խմբագիրներին այդ աւելացած գումարի փոխարէն իրանց թերթերը ուղարկել այն ամենայն ազգային հիմնարկութիւններին, որոնք չունեն սեփական միջոց լրագիր ստանալու. Ինքը Ց. Թառայեանը իր չորս ընկերներով պատրաստ է առաջիկայ 1882 թ-ի «Մշակի» բաժանորդագինը փոխանակ 10 բուբլու ուղարկել 11 բ., այդ նպատակով.

Պ. Ց. Թառայեանի այդ առաջարկութեանը կարելի է աւելացնել, որ մեր պարբերական թերթերին հէնց առանց այն էլ հարկաւոր է